Շուշան
ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ-գիտաշխատող

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2016 թ. աշխատանքի է անցել ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում՝ սկզբում որպես կրտսեր հետազոտող, 2018 թ.-ից՝ որպես փորձագետ, իսկ 2025 թ.-ից՝ որպես փորձագետ-գիտաշխատող: Հեղինակ և համահեղինակ է 9 գիտական աշխատանքների:

https://orcid.org/0000-0001-7669-8626

ՀԱՅԱՍՏԱՆ-ԲԵԼԱՌՈՒՍ ԱՌԵՎՏՐԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989_2025.1-68

Հիմնաբառեր. *Հայաստան, Բելառուս, առևտուր, առևտրի փոխլրացման ինդեքս*

Հայաստանի և Բելառուսի միջև տնտեսական համագործակցությունը մշտապես դիտարկվել է ԵԱՏՄ համատեքստում: Թեև ինտեգրացիոն միավորմանն անդամակցությունը լայն հնարավորություններ է ստեղծել երկկողմ առևտրի զարգացման համար, սակայն կառույցի գործունեության ընթացքում շարունակաբար գերակշռել են Ռուսաստանի Դաշնության հետ ուղղահայաց կապերը: Ներկայիս աշխարհաքաղաքական ճգնաժամը խթաններ է ստեղծել Հայաստանից Բելառուս արտահանման և, հատկապես, վերաարտահանման առաջխաղացման ուղղությամբ: Հոդվածում փորձ է արվում գնահատելու հայ-բելառուսական առևտրային կապերի շարժընթացը և ներուժը:

Խորհրդային Միության փլուզումից հետո անդամ երկրների առջև ծառացավ տնտեսական կապերի վերակառուցման խնդիրը: Նորանկախ Հայաստանում վավերացված առաջին փաստաթղթերից մեկը «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև առևտրատնտեսական համագործակցության սկզբունքների մասին»[1] 1991 թ. դեկտեմբերի 30-ի համաձայնագիրն էր, որով սկիզբ դրվեց այս երկու երկրների միջև երկկողմ հարաբերությունների զարգացմանը:

Հայաստանի և Բելառուսի միջև տնտեսական կապերը զարգացել են մի քանի փուլով: 2003 թ. հուլիսի 28-ին ուժի մեջ է մտել Հայաստանի և Բելառուսի միջև ազատ

[1] Երկկողմ միջազգային պայմանագրեր, http://www.parliament.am/library.php?page=document&DocID=740&lang=arm

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Հայաստանի և Բելառուսի միջև առևտրաշրջանառությունը, 2014, 2019 և 2023 թթ.[12]

	Հայաստանի արտահանումը դեպի Բելառուս			Հայաստանի ներմուծումը Բելառուսից		
	Ծավալը, մլն ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %	Դիրքն առաջատար գործընկերների շարքում	Ծավալը, մլն ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %	Դիրքն առաջատար գործընկերների շարքում
2023	91.7	1,1	11	89.7	0,7	18
2019	17,7	1	17	49,8	1	18
2014	9.0	0.6	21	31.0	0.7	26
	Բելառուսի արտահանումը դեպի Հայաստան			**Բելառուսի ներմուծումը Հայաստանից**		
	Ծավալը, մլն ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %	Դիրքն առաջատար գործընկերների շարքում	Ծավալը, մլն ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %	Դիրքն առաջատար գործընկերների շարքում
2023	89.7	0,2	-	91.7	0,2	-
2019	52.6	0,2	38	18.2	0,05	61
2014	27.2	0.1	50	8.9	0.02	53

առևտրի համաձայնագիրը[2], որն էլ մինչև ԵԱՏՄ կազմավորումը դարձել է տնտեսական փոխգործակցության կարգավորման հիմնական գործիքը: Ըստ այդմ՝ վերացվել են կողմերից ծագող ապրանքների մաքսատուրքերը (բացառությամբ սպիրտի, իսկ Բելառուսի համար՝ նաև սպիտակ շաքարի ներմուծման):

Եվրասիական տնտեսական միության ձևավորմամբ մեկնարկեց տնտեսական ինտեգրման նոր փուլ, որը հիմնվեց առևտրատնտեսական քաղաքականության միասնականացման, ապրանքների շարժի խոչընդոտների վերացման վրա: Որպես հաջորդ փուլ՝ կարելի է դիտարկել ռուս-ուկրաինական հակամարտության մեկնարկը, որը հանգեցրեց մատակարարման գլոբալ շղթաների վերափոխմանը: Բելառուսը, Ռուսաստանի հետ մեկտեղ, հայտնվեց պատժամիջոցների կիզակետում: Ընդ որում,



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Հայաստանի և Բելառուսի միջև առևտրաշրջանառությունը, 1997-2023 թթ.[5]

[2] Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև ազատ առևտրի մասին համաձայնագիր, http://www.parliament.am/library/erkoxm/2003/3.pdf

[3] UN Comtrade և Բելառուսի վիճակագրական կոմիտե, https://comtradeplus.un.org/, https://www.belstat.gov.by/ofitsialnaya-statistika/realny-sector-ekonomiki/vneshnyaya-torgovlya/vneshnyaya-torgovlya-tovarami/godovye-dannye/ , 2023 թ. Հայաստանի մասնաբաժինը Բելառուսի առևտրում հաշվարկվել է՝ հիմք ընդունելով փոխադարձ առևտրի հայելային տվյալները:

[4] The Global Sanctions Data Base (GSDB) NEW UPDATE, 2023, https://www.globalsanctionsdatabase.com/

[5] UN Comtrade, https://comtradeplus.un.org/

զարգացած երկրների կողմից կիրառված պատժամիջոցների զգալի մասը վերաբերում է արտահանման և ներմուծման սահմանափակումներին[4]: Այսպիսի միջոցառումները մարտահրավերներ ի հայտ բերելու հետ մեկտեղ հնարավորություններ են ստեղծել Հայաստանից Բելառուս արտահանման և, հատկապես, վերաարտահանման զարգացման ուղղությամբ:

Աղյուսակ 1-ից պարզ է դառնում, որ, չնայած տնտեսական ինտեգրման դինամիկ գործընթացներին և առևտրային խոչընդոտների հետևողական կերպով վերացմանը, փոխադարձ առևտուրը նշանակալի չէ թե՛ Հայաստանի և թե՛ Բելառուսի համար: Այսպես՝ 2023 թ. տվյալներով Բելառուսն արտահանման գծով ՀՀ 11-րդ խոշորագույն գործընկերն է՝ 1,1% մասնաբաժնով (91,7 մլն ԱՄՆ դոլար), իսկ ներմուծման գծով 18-րդը՝ 0,7% մասնաբաժնով (89.7 մլն ԱՄՆ դոլար): Բելառուսի արտահանման և ներմուծման մեջ ՀՀ մասնաբաժինը չի գերազանցում 0,2%-ը: Այնուհանդերձ, հայ-բելառուսական առևտրային կապերն ունեն կայուն դրական շարժընթաց և շեշտակիորեն աճել են ռուս-ուկրաինական հակամարտության համատեքստում:

Աղյուսակ 2-ից պարզ է դառնում, որ վերջին տարիներին երկկողմ առևտրի զարգացման քարշիչ ուժը վերաարտահանումն է, ինչը ցայտուն կերպով երևում է 2023 թ. և 2019 թ. արտահանման կառուցվածքների համեմատությունից: Այսպես՝ 2023 թ. արտահանման 31,5%-ը կազմել են հեռախոսային, 10,9%-ը՝ տվյալների մշակման, 1,9%-ը՝ տվյալների փոխանցման սարքերը: Դրանք այնպիսի բարձրտեխնոլոգիական ապրանքներ են, որոնք չեն արտադրվում Հայաստանում[6]: Հետևապես՝ ներկայումս արտահանման զգալի մասն իրականում պատժամիջոցներով պայմանավորված վերաարտահանում է:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ՀՀ-Բելառուս առևտրի ապրանքային կառուցվածքը, 2019 և 2023 թթ.[7]

ԱՐՏԱՀԱՆՈՒՄ					
	2023			2019	
Ապրանքախումբ	Ծավալը, մլն ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %	Ապրանքախումբ	Ծավալը, մլն ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %
Հեռախոսային սարքեր	28.9	31.5%	Խաղողի սպիրտային խմիչքներ	10.1	56.9%
Խաղողի սպիրտային խմիչքներ	13,5	14.7%	Արծաթյա զարդեր՝ այլ թանկարժեք մետաղներով պատված կամ առանց դրանց	1.4	7.9%
Տվյալների մշակման սարքեր	10,9	11.9%	Պղնձի թափոններ և ջարդոն	0,5	3,1%
Անասնաբուժական պատվաստանյութեր	6,1	6.7%	Հիգիենայի պարագաներ	0,5	3,0%
Հաղորդակցման սարքեր և տվյալների փոխանցման սարքավորումներ	1,7	1.9%	Այլ խաղալիքներ	0,2	1,2%
Այլ	30,6	33,3%	Այլ	4,9	27,8%
ՆԵՐՄՈՒԾՈՒՄ					
	2023			2019	
Ապրանքախումբ	Ծավալը, մլն ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %	Ապրանքախումբ	Ծավալը, մլն ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %
Չմշակված ադամանդներ	21,9	24.5%	Խտացրած կաթ և սերուցք, կաթի փոշի	7,4	14.8%
Խտացրած կաթ և սերուցք, կաթի փոշի	11,2	12.5%	Տրակտորներ	3,0	6.1%
Վերելակներ և բեռնամբարձիչներ	4,3	4.8%	Թելավոր փայտե սալիկներ	2,7	5.4%
Փայտանյութ	3,1	3.5%	Խտացրած կաթ և սերուցք, կաթի փոշի՝ ավելի քան 1.5% յուղայնությամբ	2,14	4.2%
Դեղամիջոցներ	2,5	2.8%	Դեղամիջոցներ	1,9	3.8%
Այլ	46,6	52,0%	Այլ	32,8	65,8%

[6] AMBERD Research Center. (2024). The Foundations of High-Tech Industry Development and Key Challenges, Armenian State University of Economics, https://asue.am/upload/files/amberd/%D4%B2%D5%8F%D4%B1-2024%20(1).pdf

[7] UN Comtrade, https://comtradeplus.un.org/

2019 թ. արտահանման կառուցվածքը դիտարկելիս նկատում ենք, որ Հայաստանի արտահանման ավանդական ճյուղը եղել է սպիրտային խմիչքներ ապրանքախումբը, որին բաժին է ընկել ամբողջ արտահանման 56,9%-ը: 2023 թ. արդեն սպիրտային խմիչքների մասնաբաժինը կրճատվել է մինչև 14,7%: Չնայած մասնաբաժնի կրճատմանը՝ նույն ժամանակահատվածում այդ ապրանքների ծավալներն ավելացել են 10,1-ից մինչև 13,5 մլն ԱՄՆ դոլար: Մնացած ապրանքների արտահանումը 2019 թ. եղել է աննշան:

Բելառուսից ներմուծումը, ավանդաբար, պակաս կենտրոնացված է: Հիմնականում ներմուծվել են կաթնամթերք, տրակտորներ և դեղամիջոցներ: Դրանց մասնաբաժինը 2019 թ. կազմել է շուրջ 30%: Մինչդեռ 2023 թ. ներմուծման մեջ ամենամեծ կշիռն ունեցել է չմշակված ադամանդը (21,9%): «Բելառուսական» ադամանդի ներմուծումը ևս կապված է ռուսական գործոնի հետ[8]: 2023 թ. ԵՄ-ն սահմանեց ռուսական ադամանդի ներմուծման արգելք, որից հետո վերջինս արտահանվում է Բելառուսի և Հայաստանի միջնորդությամբ[9]: Ընդհանուր առմամբ, երկու երկրների միջև առևտրի կառուցվածքը ցույց է տալիս աճի ժամանակավոր, ոչ կայուն գործընթացների վրա հիմնված լինելու հանգամանքը:

Փոխադարձ առևտրի գնահատման տեսանկյունից, կարևոր տեղեկություն է պարունակում առևտրի փոխլրացման ինդեքսը (ԱՓԻ), որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$100 * \left[1 - \sum_k \left[\frac{m_{jk}}{M_j} - \frac{x_{ik}}{X_i}\right]\right],$$

որտեղ x-ը i երկրից k ապրանքի արտահանումն է, X-ը՝ i երկրի ամբողջ արտահանումը, իսկ m-ը՝ գործընկեր j երկրի k ապրանքի ներմուծումը, M-ը՝ այդ երկրների ամբողջ ներմուծումը: ԱՓԻ-ն ցույց է տալիս, թե որքանով է մի երկրի արտահանման կառուցվածքը համընկնում կամ փոխլրացնում մյուս երկրի ներմուծման կառուցվածքին: Գծապատկերից պարզ է դառնում, որ Հայաստանի արտահանման և Բելառուսի ներմուծման պահանջարկի միջև փոխլրացման մակարդակը ցածր է, թեև, 2022 թվականից սկսած, այս ցուցանիշը մոտեցել է ցածր համարվող միջակայքի վերին շեմին (ԱՓԻ 21-40 միավորը համարվում է ցածր փոխլրացելիություն): Սրանից կարելի է ենթադրել, որ առկա է դեպի Բելառուս արտահանման որոշակի ներուժ, որը, սակայն, սահմանափակ է: Ընդհակառակը, Բելառուսն ունի բավական



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Հայաստան-Բելառուս և Բելառուս-Հայաստան առևտրի փոխլրացման ինդեքսը, 2013-2023 թթ.[10]

[8] Беларусь нарастила торговлю алмазами. Кто их покупает, 23.05.2024, https://ibmedia.by/

[9] Беларусь стала одним из пунктов обработки российских алмазов в обход санкций, (30.08.2023), https://nashaniva.com/ru/325275

[10] Աղբյուրը՝ World Integrated Trade Solution (WITS)

մեծ ներուժ՝ Հայաստանի ներմուծման պահանջարկը բավարարելու տեսանկյունից: Բելառուս-Հայաստան առևտրի փոխլրացման ինդեքսը բարձր է, թեև վերջին տասը տարիների ընթացքում անընդհատ նվազման միտում է ունեցել:

Ամփոփելով կարող ենք նշել, որ վերջին տարիներին թեև փոխադարձ առևտուրն աճում է աննախադեպ տեմպերով, այդուհանդերձ, դա հիմնված է ոչ թե երկրների արտադրական կարողությունների զարգացման, այլ ժամանակավոր, ոչ կայուն գործոնների վրա: Միաժամանակ, հայ-բելառուսական տնտեսական կապերի զարգացման համար առկա են մի շարք հնարավորություններ: Առաջին հերթին, դրանք վերաբերում են ԵԱՏՄ անդամակցությանը, որի ներուժը չի օգտագործվել: Բացի այդ, վերջին տարիներին աշխարհաքաղաքական տարաձայնությունները համաշխարհային առևտուրը վերաուղղորդում են դեպի տնտեսական և քաղաքական նույն բլոկի երկրներ: Այս առումով, ԵԱՏՄ անդամակցությունը լայն հնարավորություններ է ընձեռում Հայաստանի և Բելառուսի շուկաների ինտեգրման համար: Հատկապես մեծ ներուժ ունի Բելառուսից ներմուծման ընդլայնումը՝ գյուղատնտեսական տեխնիկայի, կաթնամթերքի ներմուծման տեսանկյունից: Հեռանկարային կարող է լինել նաև համագործակցությունն ադամանդի մշակման ոլորտում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Երկկողմ միջազգային պայմանագրեր, http://www.parliament.am/library.php?page=document&DocID=740&lang=arm
2. Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև ազատ առևտրի մասին համաձայնագիր, http://www.parliament.am/library/erkoxm/2003/3.pdf
3. Բելառուսի վիճակագրական կոմիտե, https://www.belstat.gov.by/ofitsialnaya-statistika/realny-sector-ekonomiki/vneshnyaya-torgovlya/vneshnyaya-torgovlya-tovarami/godovye-dannye/
4. Беларусь стала одним из пунктов обработки российских алмазов в обход санкций, (30.08.2023), https://nashaniva.com/ru/325275
5. Беларусь нарастила торговлю алмазами. Кто их покупает, 23.05.2024, https://ibmedia.by/
6. AMBERD Research Center. (2024). The Foundations of High-Tech Industry Development and Key Challenges, Armenian State University of Economics,
7. https://asue.am/upload/files/amberd/%D4%B2%D5%8F%D4%B1-2024%20(1).pdf
8. UN Comtrade, https://comtradeplus.un.org/
9. The Global Sanctions Data Base (GSDB) NEW UPDATE, 2023, https://www.globalsanctionsdatabase.com/
10. World Integrated Trade Solution (WITS), https://wits.worldbank.org/

Шушан МОВСИСЯН
Эксперт-научный сотрудник исследовательского центра «Амберд», АГЭУ

АРМЕНИЯ И МИР

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ В ТРАНСФОРМАЦИИ ТОРГОВЛИ МЕЖДУ АРМЕНИЕЙ И БЕЛАРУСЬЮ

Экономическое сотрудничество между Арменией и Беларусью всегда рассматривалось в контексте ЕАЭС. Хотя членство в интеграционном объединении создало широкие возможности для развития двусторонней торговли, на протяжении деятельности ЕАЭС доминировали вертикальные связи с Российской Федерацией. Текущий геополитический кризис создал стимулы для развития экспорта и, особенно, реэкспорта из Армении в Беларусь. В статье предпринимается попытка оценить динамику и потенциал развития армяно-белорусских торговых отношений.

Ключевые слова: *Армения, Беларусь, торговля, индекс комплементарности торговли*

Shushan MOVSISYAN
Expert-scientific researcher at «Amberd» Research Center, ASUE

ARMENIA AND THE WORLD

ARMENIA-BELARUS TRADE TRANSFORMATION DYNAMICS

Economic cooperation between Armenia and Belarus has been viewed within the context of the EAEU. Although membership in the integration union has created broad opportunities for the development of bilateral trade, during the course of EAEU activity, the vertical ties with the Russian Federation have continuously dominated. The current geopolitical crisis has created incentives for the development of exports and, especially, re-exports from Armenia to Belarus. This article attempts to assess the dynamics and development potential of Armenian-Belarusian trade relations.

Keywords: *Armenia, Belarus, trade, trade complementarity index*